ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ.՝ (-374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

№ 16/20413-24 «05» փետրվարի 2024թ.

«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊԸ-Ի

ՏՆՕՐԵՆ Է. ԴԱՎԹՅԱՆԻՆ

/Ք. ԵՐԵՎԱՆ, ԴԱՎԹԱՇԵՆ 4-ՐԴ ԹԱՂ., 32Շ., 45ԲՆ./

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
(Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին)

Հարգելի՛ Է. Դավթյան,

Երևանի քաղաքապետարանի և «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության միջև 2023 թվականի ապրիլի 25-ին կնքված N ԵՔ-ԲՄԽԱՇՁԲ-23/34-2 ծածկագրով աշխատանքների կատարման գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.87 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.81 մանկապարտեզի բակի բարեկարգման, Ավան վարչական շրջանի հ.55 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման, Աջափնյակ վարչական շրջանի հ.47 մանկապարտեզի բակի բարեկարգման, Նոր Նորք վարչական շրջանի հ.108 մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման, Նոր Նորք վարչական շրջանի հ.109 մանկապարտեզի բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից պայմանագրով Պատվիրատուին վերապահված իրավունքների և

պարտականությունների իրացման արդյունքում պարզվել է, որ Կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի 1.2 կետով սահմանված աշխատանքների կատարման ժամկետները:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից 26.01.2024 թվականին «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերությանն է հասցեագրել թիվ 16/14949-24 գրությունը՝ այն մասին, որ 2023 թվականի դեկտեմբերի 16-ին վերը նշված աշխատանքները կատարելու համար Պայմանագրով նախատեսված ժամկետն ավարտվել է, ուստի անհրաժեշտ է մինչև սույն թվականի հունվարի 29-ը ներառյալ ներկայացնել պայմանագրով ամրագրված տեխնիկական առաջադրանքով սահմանված աշխատանքների ամբողջական փաթեթը, այնինչ ներկայացված գրությանն առ այսօր որևէ ընթացք չի տրվել և «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության կողմից՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.87 և Ավան վարչական շրջանի հ.55 մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները չեն ներկայացվել:

Միաժամանակ նշված գրությամբ վերջինս իրազեկվել է պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի դրույթի մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի

համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ **Պատվիրատուն միակողմանի մասնակի (**Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հ.87 և Ավան վարչական շրջանի հ.55 մանկապարտեզների հիմնանորոգման և բակերի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների մասով**)** լուծում է պայմանագիրը՝ *պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործի եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերերդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորություն չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի որակավորման և կատարման ապահովման գումարները համապատասխանաբար 885.000 ՀՀ դրամ և 590.000 ՀՀ դրամ՝ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին.

-մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԳԵՂԱՄՅԱՆ
3910890377

2024-02-05 12:11:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Շինարարության և բարեկարգման վարչություն
հեռ. 011-514-256